

ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ստացողի/Գործատուի Պատասխանատվության Հարցաթերթիկ

ԵՄ՝ _____, Տեղեկացվել է՝ ԵՄ ԻՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐ ԵՄ՝ ՈՐՊԵՍ ՍՍՏՅՈՂ/ԳՈՐԾԱՏՈՒ, ՊԱՏԱՄԻՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԿՐՈՒՄ ՍՏՈՐՆ ԹՎԱՐԿՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

- 1) Տրամադրել իմ Սոցիալական Աշխատողին պահանջվող փաստաթղթերը՝ իրավագործությունը շարունակելու և ծառայությունների կարիքը որոշելու համար: Ձեկուցելիք տեղեկությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում իմ եկամուտի, ընտանիքի, ամուսնական կարգավիճակի, սեփականության իրավունքի և տանից իմ դուրս գալու ժամանակի փոփոխությունները:
- 2) Գտնել, վարձել, վարժեցնել, վերահսկել և ազատել գործից իմ կողմից գործի ընդունած մատուցողին:
- 3) Հետևել աշխատավարձերին/ժամերին/աշխատանքային պայմաններին և 18 տարեկանից ցածր անձանց վարձակալությանը վերաբերող օրենքներին և կանոնակարգերին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Ծանոթացե՛ք աշխատավարձերին/ժամերին/աշխատանքային պայմաններին վերաբերող Աշխատանքի Պայմանների Կոմիտեի (IWC) հրաման թիվ 15-ին, որը կարելի է ձեռք բերել հեռախոսային տեղեկատուի մեջ թվարկված Աշխատանքային Հարաբերությունների Պետական Դեպարտամենտից, Աշխատանքային Ստանդարտների և Հարկադիր Կատարման Բաժանմունքից: Անչափահասների վարձակալման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն հնարավոր է ձեռք բերել ձեր տեղային դպրոցական շրջանի միջոցով:

- 4) Ստուգել, որ ձեր մատուցողը բնակվելիս լինի Միացյալ Նահանգներում օրինական կերպով: Իմ մատուցողը և ես կլրացնենք Ձև I-9: Ես կպահպանեմ Ձև I-9 առնվազն երեք (3) տարի կամ մեկ (1) տարի աշխատանքի ավարտից հետո՝ կախված այն բանից, դրանցից որ մեկը կլինի ավելի երկար: Ես կպաշտպանեմ մատուցողի գաղտնի տեղեկությունները ինչպիսին են իր սոցիալական ապահովագրության համարը, հասցեն և հեռախոսահամարը:
- 5) Ապահովել իմ մատուցողի համար հատուցման նորմեր, աշխատանքային ժամանակացույց և աշխատանքային պայմաններ:
- 6) Տեղեկացնել իմ Սոցիալական Աշխատողին իմ մատուցողի մոտ տեղի ունեցած յուրաքանչյուր հետագա փոփոխության մասին, ներառյալ՝
 - Անունը
 - Հասցեն
 - Հեռախոսահամարը
 - Ազգակցական կապն ինձ հետ, եթե այդպիսին գոյություն ունի
 - Յուրաքանչյուր մատուցողի աշխատելիք ժամերի քանակը և կատարելիք ծառայությունները

- 7) Տեղեկացնել իմ մատուցողին, որ համախառն ժամավճարը կազմում է \$ _____, իսկ Սոցիալական Ապահովագրման և Անաշխատունակությունից Պետական Ապահովագրման հարկերը պահվում են մատուցողի աշխատավարձից
- 8) Տեղեկացնել իմ մատուցողին, որ ինքը կարող է պահանջել, որ դաշնային և/կամ նահանգային եկամտահարկերը պահվեն իր աշխատավարձից: Հրահանգել մատուցողին ներկայացնել Ձև W-4 (դաշնային եկամտահարկի պահման համար) և/կամ Ձև DE 4 (նահանգային եկամտահարկի պահման համար)
- 9) Տեղեկացնել իմ մատուցողին, որ նրա վրա տարածվում է Աշխատողների Փոխհատուցման Ապահովագրությունը, Գործազրկությունից Պետական Ապահովագրման նպաստները և Անաշխատունակությունից Պետական Ապահովագրման նպաստները
- 10) Տեղեկացնել իմ մատուցողին, որ ինքը կստանա տեղեկատվական թերթիկ, որը կփաստի իմ թույլատրված ծառայությունների և այդ ծառայությունների իրականացման համար հատկացված թույլատրված ժամանակի մասին: Տեղեկացնել մատուցողին, որ ինքը չի վճարվի աշխատանք կատարելու համար, երբ ես տանից բացակայում եմ (օրինակ՝ հիվանդանոցում կամ արձակուրդում իմ լինելու դեպքում)
- 11) Վճարել իմ ծախսաբաժինը, եթե այդպիսին լինի
- 12) Ստուգել և ստորագրել իմ մատուցողի հաշվեցուցակը ամեն վճարման ժամկետի համար, որը ցույց է տալիս ճիշտ օրը(երը) և ընդհանուր աշխատած ժամերի քանակը: Ես հասկանում եմ, որ ես, Դաշնային և Նահանգային օրենքների համաձայն, կարող եմ հետապնդել դատական կարգով կեղծ տեղեկություն հայտնելու կամ տեղեկություն թաքցնելու համար: Ես հասկանում եմ, որ ըստ պահանջման ինձ հարկավոր կլինի դնել իմ մատնահետքը իմ մատուցողի հաշվեցուցակի վրա՝ ստուգելու ճիշտ օրը(երը) և աշխատած ժամերը: Սա անհրաժեշտ կլինի, որպեսզի իմ մատուցողը կարողանա վճարվել:
- 13) Համոզվել, որ իմ մատուցողը ստորագրել է իր հաշվեցուցակը
- 14) Տեղեկացնել իմ մատուցողին փոստով ուղարկել իր ստորագրված հաշվեցուցակը համապատասխան հասցեով յուրաքանչյուր վճարման ժամկետի վերջում

Ստացողի ստորագրություն՝

Ամսաթիվ՝

Անունը տպած՝

ՄՏԱՑՈՂԻ/ԳՈՐԾԱՏՈՒԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Այս ձևն օգտագործվում է ստուգելու համար, որ ստացողները ծառայություն են ստանում միայն Անհատ Մատուցողներից:
2. Վարչաշրջանները պետք է օգտագործեն այս ձևը համոզվելու համար, որ ստացողները տեղեկացվել են և հասկացել իրենց հիմնական պարտականությունները որպես ՏԱՕ մատուցողներ:
3. Ստուգել ստացողի հետ յուրաքանչյուր կետ և բացատրել, ինչպես է կարող ստացողը բավարարել յուրաքանչյուր պահանջը:
4. Ձևի մեկ օրինակը թողնել ստացողի մոտ: